տուածընկալ սուրբ Նշանէս Վանկկոյ, և ի շնորհաբաշխ Աղոյս մեր Սուրբ Լուսաւորչին Գրիգորի, և յերկնահանդէտ սուրբ աթոռոյս առաքելական. Որոց արագահաս աքանչելագործ կարող զաւրութեամբն և աւրհնութեամբն՝ պահպանեալ փրկեսջիք յամենայն վտանգից փորձանաց հոգւոյ և մարմնոյ, տամք և որդովք, և ամենայն գոհիք. ամէն։

Գիտութիւն լիցի ձեզ ամենեցուն, սիրելի որդիք մեր ի Քրիստոս, բազմաշարչար երկամբք ծնունդք աւետարանաւն ի Քրիստոս Աստուած՝ Սրբոյն Գրիգորի. զի ըստ հայրական ջերմն սիրո մեր զոր ունիմք ի վերա ձեր, հանապազ հոգ մեր դուք էք ի Տէր, եթէ ո՞րպէս կամ զիարդ էք ի ժամանակիս չար բերմանց ներքուստ և արտաքուստ ներհակաց. զոր և աղաւթիւք հայցեմք յԱստուծոյ և ի մեր Սուրբ Լուսաւորչէն, պահել զձեզ խաղաղութեամբ հոգւոյ և մարմնոյ առողջութեամբ և ամենայն բարութեամբ։

Եւ այլ ծանիք մեր ըստ հոգւոյ որդիք, զի այդ Գրիգոր ասացեալ չեպիսկոպոսդ՝ որ ի Լովդ դարանակալ նստի, նա ի մեր նախնեացն ժամանակն ի Քրիստոս հանգուցելոցն՝ ի Տէր Մեսրաւպա և ի Տէր Կոստանդիա, բազում անսահման բաներ գործեաց. զի առանց իր ձեռնադրողին հրամանաց՝ յայլոց վիճակ կու ձեռնարկէր, և ամբարտաւանութեամբ կու գնայր. յաղագս որո բազում խրատական գրեր առաքեաց առ նա, և նա ոչ սգաստացաւ։ Յետ այնորիկ վաղնջանեցաւ Տէր Մեսրովբ, և հաստատեցաւ Տէր Կոստանդին. իսկ այդ ասացեալ չեպիսկոպոսդ Գրիգորդ՝ ևս առաւել յամախեաց ի յանուղղեա վարս իւր. որ և եհաս համբավ չարութեան նորա առ Տէր Կոստանդին. որ և յոյժ վիրաւորեցաւ նմայ. սակայն ներեաց, թերևս յուղութիւն դարձցի։ Ապա յետ այնորիկ ել և եկն ասացեալ չեպիսկոպոսդ՝ առ Տէր Կոստանդին. և այնպէս երևեցոյց զինքն Կաթողիկոսի, որպէս ասէ Քրիստոս, եթէ Գայցեն առ ձեզ հանդերձիւք ոչխարաց, և ի ներքո են գայլք յափշտակողք. Նայ այնպէս արար. զի սուտ խոնարհութեամբ և սնոտապատիր խաբէութեամբ պատրեաց զմեր նախնին, և կրկին էառ շրջաբերական Լովին։ Իսկ յետ սակաւ աւուրց իմացաւ Տէր Կոստանդին զնորա անուղղեա գործերն, և ծանեաւ ըզնայ որպէս ասէ Քրիստոս, եթէ, Ի պտղոնոցա ծանիջիք զնոսա։ Ցըղեաց մարդ ըզհետ նորա մինչև ի Վահկայն, և ետ առնուլ ի նմանէ ըզշրջաբերականն և զամենայն գրերսն, և գնա հերքեցին։ Իսկ այս չարեաց արմատ ասացեալ չեպիսկոպոսդ՝ եկն դարձեալ ի քաղաքն. և զերկաթն՝ զոր սպունկանաւ[1] ծածկեալ ունէր՝ նա ի գործ չարութեան էած. զի գնաց յարեցաւ յիշխանսն, և կաշառս ետ նոցա, որ եկին իշխանութեամբ զկաթողիկոս ի կամաց հանին, և առին զմա շրջաբե-

1. Մուրթ և անսովոր բառիւ ըսուած. Սպոնկանն՝ թուի իմն թէ ոչ սպունգ՝ այլ պատեան նշանակէ, որոյ մէջ ծածկեր էր չարութեան կամ կարելու գործիք երկաթը. այսպէս գուշակել տայ և հին բժշկարանի մէջ Սպոնկոս գրուածն, ներքին վիրաց դարմանի համար. «Զփորն խարկէ սպունկառով». իսկ Գիմիադիրքն՝ աւելի սպունգի կարծիք տայ, ըսելով. «Ծողովեցի սպունգառով կամ փեսրով»։